ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- -------- 2010թ. N---- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի <<Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> N 1687-Ն որոշման 4-րդ կետում <<Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը>> բառերով:
2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում <<Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն>> պետական ոչ առեւտրային կազմակերպության կանոնադրության մեջ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ և ապահովել դրանց պետական գրանցումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագծի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ <<Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն>> պետական ոչ առեւտրային կազմակերպությունն ունի քաղաքաշինության բնագավառում կապիտալ ծախսերի հաշվարկման և վերլուծության գործառույթներ և հանդիսանում է ոլորտում իրականացվող գնումների գործընթացի բաղկացուցիչ մաս: Մասնավորապես՝ վերը նշված կազմակերպության գործունեության հիմնական գործունեության նպատակներն են՝

1. շինանյութերի բորսային միջինացված գների ամենամսյա տեղեկագրերի հրապարակումը,

2.մասնակցությունը Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի գնագոյացման եւ հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով պետական քաղաքականության մշակման աշխատանքներին,

3. միջազգային կազմակերպությունների եւ դոնոր երկրների հետ համատեղ իր իրավասության սահմաններում քաղաքաշինության բնագավառի գնագոյացման ծրագրերի մշակումը եւ իրականացումը,

4. պետական պատվերի շրջանակներում քաղաքաշինության բնագավառի գնագոյացման ծրագրերի իրականացումը,

5. գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի մշակումը:

Նշված լիազորությունները ուղղակի առնչվում են քաղաքաշինության բնագավառի գնումների նախահաշիվների ընթացքում կիրառվող ապրանքների , գույքի կամ

ծառայության գների հաշվարկման հետ : Գործառույթների և կառուցվածքի որոշակի փոփոխությունների իրականացման պարագայում հնարավոր կլինի գնումների ընթացքում գնագոյացման հաշվարկման և վերլուծության կիրառվող մոտեցումները կիրառել ոչ միայն քաղաքաշինության բնագավառում, այլ գնումների ամբողջ համակարգի վրա :

Վերոգրյալից ելնելով՝ նպատակահարմար է կազմակերպության՝ հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի լիազորությունները վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը :

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագծի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ <<Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն>> պետական ոչ առեւտրային կազմակերպությունն ունի քաղաքաշինության բնագավառում կապիտալ ծախսերի հաշվարկման և վերլուծության գործառույթներ և հանդիսանում է ոլորտում իրականացվող գնումների գործընթացի բաղկացուցիչ մաս: Վերոգրյալից ելնելով՝ նպատակահարմար է կազմակերպության՝ հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի լիազորությունները վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը :

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1687-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1687-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1687-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: